

# ԱՐՑԱԽԻ ՄԷՋ ԱԶԵՐԻՆԵՐԸ ԿԸ ՊԱՅԹԵՑՆԵՆ 12-ՐԴ ԴԱՐՈՒ ԱՆԱՊԱՏԻ ՎԱՆՔԻ ՀԱՍԱԼԻՐԸ

«Գրական թերթ»-ի 7 Հոկտեմբերի թիւին մէջ Սեդա Վերմիշեաւ ստորագրած է մասնաւորաբար շահեկան յօդուած մը «Ո՞րն է սահմանագիծը, կամ Լեռնային Ղարաբաղի վարչական կարգավիճակի հարցի շուրջ» խորագիրով:

Յօդուածագիրը նախ կը խօսի Արցախը Հայաստանին միացնելու մերժումին իրաւական անյարիրութեան մասին (Ս. Միութեան Սահմանադրութիւն, յօդուած 2, 70, 78) ու նշելէ ետք թէ 1954 թուականին Ղրիմը ուսական հանրապետութենէն Ուքրանիոյ կազմին մէջ տեղա-

փոխուեցաւ, 1969 թուականին Ղաղախստան միջանկի շրջաններ տուաւ Իւզրեկոտանին, Կիւրկիզիան իր հողին մէկ մասը տուաւ Տաճիկիստանին, Պելոպոնեսիան Լիթուանիին զիջեցաւ իր տարածքին մէկ մասը, եւ այդ ամէնը տեղի ունեցան հանգիստ, խաղաղ, առանց արտակարգ իրավիճակի, բռնութիւններու ու սպանութիւններու», կը յայտնէ թէ Արցախի մէջ վերջերս ատրպէյճանցիներ կը շարունակեն հայկական յու-

(Շար.ը տեսնել Դ. Էջ)